ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/09

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
«Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հայկ Սեմերջյան
«Երևանի քաղաքապետարանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Արփինե Գրիգորյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6566-2019 գրությամբ «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի քաղաքապետարանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ-ի 04.04.2019թ. թիվ 0-27

գրության հիման վրա, 18.04.2019թ. «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>«Երևանի քաղաքապետարանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

«Երևանի քաղաքապետարանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ-ն 04.04.2019թ. թիվ 0-27 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Պատվիրատուն՝ «Երևանի քաղաքապետարանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ-ը, որը գտնվում է ք. Երևան,Իսահակյան 28 հասցեում: Թատրոնի կարիքների համար՝ Շինանյութի ձեռքբերման նպատակով ս/թ մարտի 13 -ին հայտարարվել է գնանշման հարցում, գնանշման հարցման ծածկագիրը՝ ԵՀՂԱԴԹ-ԳՀԱՊՁԲ-19/05:

Հայտերը բացվել են ս/թ մարտի 20-ին ժամը 12:00-ին, ք. Երևան, Իսահակյան 28 հասցեում:

Ներկայացված գնային առաջարկների ե բանակցությունների հիման վրա հանձնաժողովի որոշմամբ <<էքստերիեր Գրուպ>> ՍՊԸ-ն 18;20;21;33;34;37 չափաբաժնների համար I տեղ զբաղեցնող է ճանաչվել.

Առաջին տեղ զբաղեցրած <<էքստերիեր Գրուպ>> ՍՊԸ-ի մասով ս/թ մարտի 25-ին ներկայացվել է հարցում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Հիմք ընդունելով սույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետը և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526 Ն որոշման գնումների գործընթացի կազմակերպման կարգի 44-րդ կետի համաձայն <<էքստերիեր Գրուպ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Ս/թ ապրիլի 1 -ին «էքստերիեր Գրուպ>> ՍՊԸ-ին տեղյակ է պահվել, որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, որի հետևանքով հայտը մերժվում է»:

3. <u>«Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.04.2019թ. գրությամբ դիմել է «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6566-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

Ընկերության ներկայացուցիչը ներկայանալով նիստին բանավոր կերպով Բողոքներ քննող անձին հայտնել և գրավոր ներկայացրել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ 19.03.2019թ. թվին մինչև ժամը 15:55-ը կազմակերպությունը ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, պարտավորությունը առաջացել է N E70z8190319043066 և N E70z8190319043082 ներմուծման հարկային հայտարարագրերը ներկայացնելուց հետո, համապատասխանաբար ժամը 15:55-ին և 16:24-ին: Կից ներկայացնում ենք նշված հայտարարագրերը, հարկային մարմնի կոգմից տրամադրված տեղեկանքը և բանկի վճարման անդորրագիրը:»:

4. <u>ՍՑ-LO-2019/09 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Երևանի քաղաքապետարանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ-ն կարիքների համար՝ շինանյութի ձեռքբերման նպատակով ս/թ մարտի 13 -ին հայտարարել է գնանշման հարցման թիվ «ԵՀՂԱԴԹ-ԳՀԱՊՁԲ-19/05» ծածկագրով ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ներկայացված գնային առաջարկների ե բանակցությունների հիման վրա հանձնաժողովի որոշմամբ «էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ն 18, 20, 21, 33, 34, 37 չափաբաժնների մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել:

Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում պարզվել է, որ «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 19.03.2019թ.-ին, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 8՛801.00 ՀՀ դրամ գումարի չափով:

01.04.2019թ.-ին գնահատող հանձնաժողովը «էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ին տեղեկացրել է, այն մասին, որ վերջինս հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, որի հետևանքով հայտը մերժվում է:

«Ինեկոբանկ» ՓԲԸ-ի 19.03.2019թ. թիվ 1599 վճարման հանձնարարականի համաձայն՝ «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «900008000490» կենտրոնական գանձապետական հաշվեհամարին կատարել է 18՛362՛269.00 ՀՀ դրամի գումարի վճարում:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 03.04.2019թ. «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ին տրված թիվ 2277 տեղեկանքի համաձայն՝ 20.03.2019թ. դրությամբ Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտվորություններ չունի:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6566-2019 գրությամբ «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված

ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:
- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով,

գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ հարկային օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ հարկի (այդ թվում՝ կանխավճարի), տույժի և (կամ) տուգանքի վճարումը համարվում է կատարված վճարողին սպասարկող բանկի վճարման հանձնարարականի հիման վրա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը:

Նույն օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորության կատարում (մարում) է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և (կամ) տուգանքների գումարների հաշվեգրումը միասնական հաշվից համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Երևանի քաղաքապետարանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ-ն կարիքների համար՝ շինանյութի ձեռքբերման նպատակով գնանշման հարցման թիվ «ԵՀՂԱԴԹ-ԳՀԱՊՁԲ-19/05» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 18;20;21;33;34;37 չափաբաժնների մասով I-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում պարզվել է, որ «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 19.03.2019թ.-ին, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 8՛801.00 ՀՀ դրամ գումարի չափով:

«Ինեկոբանկ» ՓԲԸ-ի 19.03.2019թ. թիվ 1599 վճարման հանձնարարականի համաձայն՝ «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «900008000490» կենտրոնական գանձապետական հաշվեհամարին կատարել է 18՛362՛269.00 ՀՀ դրամի գումարի վճարում:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 03.04.2019թ. «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ին տրված թիվ 2277 տեղեկանքի համաձայն՝ 20.03.2019թ. դրությամբ Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի:

Տվյալ դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերությունը, հայտը ներկայացնելու նույն օրը՝ 19.03.2019թ.-ին, կենտրոնական գանձապետական հաշվեհամարին է վճարել ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրված պարտավորությունը, դրանով իսկ ապահովելով ՀՀ հարկային օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթները, համաձայն որոնց՝ հարկի վճարումը համարվում է կատարված վճարողին սպասարկող բանկի վճարման հանձնարարականի հիման վրա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ն, հայտը ներկայացնելու նույն օրը՝ 19.03.2019թ.-ին վճարելով հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունները, թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա (19.03.2019թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության առկայություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6566-2019 գրությամբ «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ